Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

ԱՆԻԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐՎԱՐՁԱՆԻ 2003 թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

2000-2001 թվականների ընթացքում Շիրակի երկրագիտական թանգարանի և ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի համատեղ հնագիտական արշավախմբի կողմից Հայկաձոր գյուղի վարչական տարածքում հայտնաբերվեցին տարբեր ժամանակաշրջանների (քարի դարից-ուշ միջնադար) հնագիտական հուշարձաններ՝ բնակավայրեր և դամբարանադաշտեր (նկ. 2):

Սրանցից ամենաուշագրավը Հոռոմոսի վանքի (նկ. 1) դիմաց գտնվող քարանձավային բնակավայրն է, որը մեր համոզմամբ Անի մայրաքաղաքի արվարձանն է: Սբ. Ղազարի Հայկական Ակադեմիայի անդամ, Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի Հայոց Կաթողիկե եկեղեցու առաջնորդ, Գերաշնորհ Հ. Ներսես արքեպիսկոպոս Տեր- Ներսեսյանի նյութական օժանդակությամբ շուրջ երկու տարվա հետախուզական աշխատանքների ընթացքում տարբեր տեղամասերից հավաքվեցին և մշակվեցին վերգետնյա և ավերված հնագիտական շերտերից դուրս եկած նյութերը: Հետախուզական աշխատանքների արդյունքները հիմք հանդիսացան Անիի նորահայտ արվարձանի ուսումնասիրության խնդիրը՝ որպես ինքնուրույն գիտական թեմա, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման առաջադրելու համար: Անցնելով համապատասխան փորձաքննություն՝ այն հաստատվեց և սկսեց իրականացվել: Սակայն հատկացված պետական միջոցները խիստ անբավարար էին հնագիտական պեղումներ ծավալելու համար:

2003թ. Հայկաձորի նորահայտ հուշարձանախմբի տարբեր հատվածներում ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, ՀՀ ՄՆ Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության ու Շիրակի երկրագիտական թանգարանի համատեղ հնագիտական արշավախմբի կողմից իրականացվեցին հետախուզական պեղումներ, որոնք նպատակ ունեին պարզել առանձին հնավայրերի ժամանակագրական և շերտագրական իրավիճակի, դրանց ժամանակագրական հաջորդականության և փոխադարձ կապի խնդիրները: Պեղումները Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Հարություն Գևորգյանի միջնորդությամբ ֆինանսավորվեցին ֆրանսահայ բարերար տեր և տիկին՝ Պետրոս և Մանիկ Թերզյանների հատկացրած միջոցներով և իրականացվեցին հուլիս-սեպտեմբեր ամիսներին: Պեղման համար տեղամասերի ընտրությունը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով և գիտական նպատակահարմարությամբ: Պեղումներ ձեռնարկվեցին երեք տեղամասերում՝ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տարածքում (նկ. 2, տեղամաս 6), անտիկ բնակավայրում և դամբարանադաշտում (նկ. 2, տեղամաս 3), ամրոցում (նկ. 2, տեղամաս 2) և միջնադարյան բնակատեղիում, քանի որ թիվ 6 և թիվ 3 տեղամասերում մշակութային շերտերը բացված էին և հավաքվել էր բավականին հնագիտական նյութ, որը հստակորեն թվագրում է տվյալ հնավայրերը: Ամրոցի տարածքում (նկ. 2, տեղամաս 2) անցյալ դարի կեսերին իրականացվել են հողաբարելավման աշխատանքներ, որի արդյունքում ամբողջովին ավերվել են վերին

Նկ. 1

շերտը, ինչպես նաև կառույցների մնացորդները: Թիվ 4 տեղամասը, որպես Հռոմոսի վանքի համալիրի մեջ գտնվող բնակատեղի, գիտական տեսանկյունից նույնպես հետաքրքրային էր: Պահպանության առումով էլ այն գտնվում է առավել բարենպաստ պայմաններում: Բացի այն, որ Հայաստանում միջնադարյան այսպիսի փոքր բնակավայրերը բավականին լավ ուսումնասիրված են, նաև նպատակահարմար չէր պեղումների համար հատկացված գումարը ծախսել բոլոր տեղամասերում զուգահեռ աշխատանքներ իրականացնելու վրա: Նման պարագայում յուրաքանչյուր տեղամասում պիտի իրականացվեր փոքր ծավալի աշխատանք, որը բնականաբար չէր կարող ակնկալվող արդյունք տալ:

ՀԱՅԿԱԾՈՐԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆԱԽՄԲԵՐ



Նկ.2

1. Քարանձավային միջնադարյան բնակավայր
2. Միջնադարյան ամրոցի մնացորդներ
3. Անտիկ բնակավայր և դամբարանադաշտ
4. Միջնադարյան բնակավայր
5. Հելլենիստական բնակավայր և դամբարանադաշտ
6. Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի / 985թ. /, վաղմիջնադարյան բնակավայր և դամբարանադաշտ, 10-13դդ. բնակավայր

Աշխատանքներն ընթացան երկու տեղամասերում՝ Հայկաձոր գյուղի մեջ (նկ. 2, տեղամաս 5) և Ախուրյանի կիրճում՝ Հռոմոսի վանքի դիմացի քարանձավներում (նկ. 3):

Հինգերորդ տեղամասում որպես պեղավայր ընտրվեց գյուղի հարավային մասի՝ արևմուտքից և հարավից հեղեղատով եզերված դարավանդը, որի ամբողջ մակերեսը ծածկված էր անտիկ ժամանակաշրջանին բնորոշ խեցեղենի բեկորներով:

Ըստ գյուղացիների, այստեղ մինչև առաջին տների կառուցումը (1950-ական թվականներ), դեռևս կանգուն էին ինչ-որ կառույցների պատեր: Այստեղ պեղվեցին հետախուզական երկու փոսորակներ: Մշակութային շերտի հզորությունը պայմանավորված է տեղանքի բնական թեքությամբ և տատանվում է 05մ -1,2մ միջև: Շերտագրական դիտարկման համաձայն՝ հուշարձանի այս հատվածը բաղկացած է չտարանջատված երկու շերտերից և շինարարական երկու հորիզոններից: Ըստ հայտնաբերված նյութերի՝ դրանք վերաբերում են մ. թ. ա. II և մ. թ. ա. I դարերին: Հետագայում՝ մ. թ. I-II դարերում, բնակավայրի տարածքը վեր է ածվում դամբարանադաշտի: Առաջին քառակուսու ստորին շերտում բացվեց կավածեփ տափանված հատակ, ինչպես նաև դյուռն հարող պատաշարի մի հատվածը: Երկրորդ քառակուսու երկրորդ շերտում բացվեց 5,5 մ երկարությամբ և 3,8 մ լայնությամբ մի կառույց, որին արևմտյան կողմից հարում են 2,25 մ և 1,9 մ տրամագծով, քառաշար պատերով երկու կրոմլեխներ: Թաղումը կատարվել է նստած դիրքով: Մկանունքի քայքայումից հետո կմախքը ետ է թեքվել և ընկել նստած դիրքն ամրապնդելու նպատակով շարված քարերի վրա (նկ. 4):

Նկ. 3

Հինգերորդ տեղամասից հայտնաբերված նյութերի մեջ կան քարից, երկաթից աշխատանքային գործիքներ, տափաշշերի, կարմիր երիզով, կիսագնդաձև, նախշազարդ թասերի, օջախների, խոհանոցային խեցեղենի բեկորներ, կավից պատրաստված, բաղիկի նմանվող թռչունների երկու փոքրիկ արձանիկներ: Նյութերի մեջ առանձնահատուկ ուշադրության է արժանի 2-րդ քառակուսուց հայտնաբերված արտաշիսյան կոթողի ներքնասալը (նկ. 5): Վերջինս, լինելով Հայաստանում նմանատիպ երկրորդ գտածոն, (առաջինը հայտնաբերվել է Բենիամինի անտիկ դաստակերտից), մեկ անգամ ևս հաստատում է Մ. Խորենացու վկայությունը արտաշիսյան սահմանաքարերի ձևի մասին և միաժամանակ հնարավորություն է տալիս ստույգ թվագրել հուշարձանը: Իսկ անտիկ դամբարանների պեղումները, ընդարձակելով Հայաստանի անտիկ թաղումների քարտեզը, ի հայտ են բերում նաև վերոհիշյալ ժամանակաշրջանի թաղման նոր ձև և արարողակարգ:


Նկ. 4

Այս տեղամասում աշխատանքներն ավարտելուց հետո իրականացվեցին պահպանական որոշ խնդիրներ ևս: Պեղված քառակուսիներն ամբողջովին ծածկվեցին պոլիէթիլենի բարակ շերտով, այնուհետև՝ նախապես քարերից մաքրված հողով: Կատարված աշխատանքները նպատակ ունեն հաջորդ տարի պեղումները սկսելիս հեշտությամբ հասնել արդեն պեղված շերտին: Երկրորդ տեղամասում իրականացված պեղումների հիմնական նպատակը քարանձավային բնակավայրի կառուցապատման սկզբունքի, բնական և ձեռակերտ քարանձավների հաղորդակցության, գործառական բնույթի և ժամանակագրական հաջորդականության բացահայտումն էր: Աշխատանքները նախ ծավալվեցին ձեռակերտ քարանձավներից մեկում՝ ներառելով նաև դրա տակ գտնվող բնական բարանձավն ու դիմացի հարթակը (նկ. 5): Քարանձավը փորված է տուֆի շերտի մեջ, ունի մոտ 13 մ. լայնությամբ և մոտ 6,5 մ. խորությամբ անկանոն ուղղանկյան ձև: Առաստաղի բարձրությունը մոտ 3 մ. է: Պատերի վրա պահպանվել են աշխատող գործիքի բերանի չափով արված տաշվածքները: Յուրաքանչյուր

պատի վրա մի բանի խորշեր կան՝ մեծ և փոքր, տարբեր խորության: Անկասկած, այս խորշերն օգտագործվել են տնտեսական նպատակներով: Դիմացի պատի ներքևի մասում փորված է կամարաձև բուխարի: Պատերի մեջ պահպանվել են նաև փոքր, միջանցիկ փորվածքներ, որոնք օգտագործել են ինչ-որ իրեր (խնոցի և այլն) կախելու համար: Կենտրոնական մասում՝ անմիջապես մուտքի դիմաց, թողնվել է միջնապատ, որով քարանձավը բաժանված է երկու հաղորդակցվող սրահների, որոնցից յուրաքանչյուրն ունի լուսամուտ: Ձախ կողմում այն շատ լավ մշակված է: Դրսից քիչ սեղմված ուղղանկյունաձև փոքր պատուհանը ներսի կողմից աստիճանաբար լայնանում է՝ նպաստելով լույսի առատորեն ներս թափանցելուն: Պատուհանն ունի ջրահեռացման համար աստիճանաբար ներքև իջնող տարաչափ հարթակներ, որոնցից վերջինն արդեն հատակին է: Պեղումներով հայտնաբերվեց երկու քարանձավների (վերին և ստորին), հաղորդակցության ուղին (նկ. 7): Հենց մուտքի մոտ փորված է 70 սմ տրամագծով անցք, որն աստիճանաբար լայնանալով, ձախ կողմում քիչ անկանոն շրջանի ձև է ստանում և թեքությամբ բացվում առաջին հարկի առաստաղին, այսինքն քարանձավի առաջին հարկի առաստաղն ու երկրորդ հարկի հատակը միջանցիկ անցքով հաղորդակից են: Քարանձավը փակվել է քարե դռնով, որի կրնկի խոռուչները պահպանվել են մուտքի երկու կողմերում:



Նկ. 5

Եթե ձեռակերտ քարանձավում մշակութային շերտի հզորությունը չի գերազանցում 0,5 մետրը, ապա սրա առաջին հարկում այն հասնում է 2,3 մետրի: Պեղումների արդյունքում առաջին հարկում և նրան հարող արտաքին հարթակում (մոտ 75 քառ.մ) հայտնաբերվեցին 6 շինարարական հորիզոններ, որոնք վերաբերում են IX-XVII դ.: Հայտնաբերվեցին քարից և երկաթից պատրաստված աշխատանքային գործիքներ, թոնիրներ (նկ. 8): Առաջին հարկի թոնիրներից մեկի մեջ գտնվեց կավից մի իր, որն ամբացված էր ակին: Իրը կավակերտ է՝ կռացած և թևերը ներքև կախած կնոջ մոտավոր պատկերով, և հավանաբար ունեցել է ծիսական գործառույթ: Խեցեղենի մեջ կան կարմրափայլ և ջնարակված բազմաթիվ բեկորներ, անհական գոտեզարդ կարասի դրոշմազարդ մասեր: Թոնիրներից մեկում գտնվեցին բյուզանդական պղնձյա դրամ (անանուն ֆոլիս 11-րդ դար, բնորոշումը դրամագետ Ա.Զոհրաբյանի) և բրոնզյա զարդեր:

Պեղվեց նաև առաջին քարանձավի հարևանությամբ գտնվող, մոտ 2,5 մ տրամագծով կոնաձև ձեռակերտ քարանձավը, որն իրենից ներկայացնում է գմբեթարդ: Հնարավոր է, որ այն դեռևս վաղ միջնադարում որպես մատուռ կամ եկեղեցի է ծառայել և նախորդել է Հռոմոսի վանքին: Դրա մասին են վկայում ոչ միայն պատերը գոտևորող կամարների աղեղները, այլ նաև կամարի գոտու վրա պահպանված փորագիր հավասարաթև խաչերը: Պատկերված հավասարաթև խաչերը բնորոշ են IV-V դարերին, ինչը թույլ է տալիս ենթադրել մատուռի՝ նույն ժամանակաշրջանին պատկանելը: Բայց ավելի ստույգ թվագրման համար կարևոր է նաև մատուռի առաստաղին փորագրված պարույրի մեջ տառերի



Նկ. 6

նմանվող տարբեր նշանների վերծանումը (նկ. 9): Քարանձավ-մատուռի հատակի մեջ բացվեց թոնիր: Տուֆի մեջ արված գլանաձև փորվածքում դրված է եղել հաստ պատերով մեծ թոնիր, հետագայում դրվել է փոքր մեկ ուրիշը՝ կողքերն ամրացված նախորդ՝ մեծ թոնրից մնացած բեկորներով (տախտակ 4, նկ.21):

Երրորդ քարանձավը պեղվեց քիչ ավելի հեռու առաջին և երկրորդ քարանձավներից, միաժամանակ շուրջ դրվեց քարանձավի դիմաց (տախտակ 5, նկ.22): Քարանձավի մուտքի մոտ պահպանվել է թոնիր: Քարանձավի մի հատվածի՝ հետագայում փլվելու հետևանքով այն այսօր հայտնվել է դրսում: Մաքրելուց հետո պարզվեց, որ ինչպես նախորդ քարանձավում, այստեղ ևս թոնիրը դրվել է տուֆի շերտի մեջ: Թոնիրի համար հարթակ ստեղծելու նպատակով ժայռաբեկորների անհարթությունը լցվել է հողով: Քանի որ քարանձավի հետին պատը եղել է մոտ 2մ ցածր, շարել են շրջանաձև պատ (պահպանվել է ներսի աղեղը՝ 1,5մ բարձրությամբ): Քարանձավի արևելյան պատի փլուզումից հետո թոնիրը հայտնվել է դրսում: Թոնիրը պահպանվել է կիսով չափ. տրամագիծը՝ 55 սմ, բարձրությունը՝ 45 սմ, աննշան ձգվածություն ունի արևելք-արևմուտք: Կիսաշրջանաձև ակն արևմտյան կողմում է (հիմքի տրամ.՝ 20 սմ, բարձր.՝ 15 սմ): Թոնիրը լավ նստեցնելու համար կողքերն ամրացրել են մեկ այլ թոնրի բեկորներով: Ակի վրա շարել են քարեր, դրանց մեջ գտնվեց նաև թոնրի շրթի մոտ ամուր նստած ծվածիր մի վանակատ: Թոնիրը քարանձավի պատից 1մ հեռու է: Այս քարանձավի մեջ դեպի դուրս՝ արևելք դրված շուրջը փլվածքի խոշոր բեկորներով լցված հողաշերտ է՝ հագեցած իրար հաջորդող մոխրաշերտերով: Շուրջի մեջ՝ 40 սմ խորության վրա, գտնվեցին ջնարակապատ մի փոքրիկ բեկոր՝ մանուշակագույնի և կանաչի երանգներով և խոհանոցային խեցեղենի մի քանի բեկորներ: Նույն պատկերը դիտարկվեց նաև տեղի այլ քարանձավային համալիրներում: Բացահայտվեց ձեռակերտ և բնական քարանձավների միմյանց հետ հաղորդակցման միասնական համակարգ:

Նկ. 7

Բացի նշված քարանձավից, հետախուզական փոսորակներ պեղվեցին քարանձավներից վերև գտնվող դարավանդի վրա, որով ճշտվեցին նախկինում հայտնաբերված հելլենիստական բնակավայրի և անտիկ դամբարանադաշտի հյուսիս-արևմտյան սահմանները: Հնավայրի այս հատվածում հողը հագեցած է հարուստ վերգետնյա նյութով, որը հիմնականում վերաբերում է անտիկ ժամանակաշրջանին և վաղ միջնադարին:



Նկ. 8

Ախուրյանի ափամերձ հատվածի հետախուզության արդյունքում հայտնաբերվեցին նաև բնակավայրը Հռոմոսի վանքի հետ կապող կամրջի մնացորդներ: Քա-

բանձավների առաջին հարկի և դիմացի հարթակների պեղումների ժամանակ բոլոր մշակութային շերտերից հայտնաբերվեցին վանակատից և դացիտից գործիքներ, նուկլեուսներ և գլեպներ, որոնցով վերահաստատվեց այստեղ քարեդարյան մշակույթի առկայությունը (տախտակ 9):

Հուշարձանախումբը մանրամասն նկարագրվել է, կատարվել են լուսանկարչական և չափագրական աշխատանքներ: Հայտնաբերված նյութերը ենթարկվել են կամերալ մշակման, կոնսերվացվել կամ վերականգնվել են, պատրաստվել են գրչանկարները: Հայտնաբերված նյութերը հանձնվել են Շիրակի երկրագիտական թանգարան:

Նկ. 9

Աշխատանքների ընթացքում խումբը սերտորեն համագործակցել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ՀՀ ՄՆ Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության, ինչպես նաև թանգարանների հետ: Կապեր են ստեղծվել թուրքական կողմում Անին պեղող ֆրանսիական արշավախմբի հետ:

Արշավախմբի աշխատանքները բազմիցս լուսաբանվել են տեղական ու հանրապետական մամուլով և հեռուստատեսությամբ:





РАСКОПКИ НОВОНАЙДЕННОГО ПРИГОРОДА АНИ 2003г.

А. Хачатрян, Л. Еганян

Резюме

Совместная экспедиция Ширакского центра армяноведческих исследований НАН РА, краеведческого музея Ширака и Агенства охраны памятников истории и культуры РА в 2003 г. провела раскопки в разных участках села Айкадзор Ширакской области. Основные работы были проведены на территории села Айкадзор и ущелья реки Ахурян, около средневекового монастырского комплекса Оромос. На территории села в результате раскопок были обнаружены античное поселение и некрополь, которые датируются II в-д.н.э.-I в. н.э. Были раскопаны одно сооружение II-I вв. д.н.э., в кладке стены которого был найден плинт Арташесской стеллы и захоронение в круглой погребальной камере I в. нашей эры. В ущелье реки Ахурян была раскопана одна рукодельная пещера и прилегающая к ней терраса. Была установлена система коммуникации рукотворных и естественных пещер, часть которых являются нижними этажами для первых. По обнаруженным материалам рукотворное пещерное городище относится IX-XVII вв. нашей эры, входит в систему средневековой столицы Армении Ани и является органической частью Оромосского монастырского комплекса.